Թեստի կառուցվածքը

Թեստը և դրա առաջադրանքները կազմելիս որդեգրել ենք TIMSS-ի ոճը:

Թեստը ունի այսպիսի կառուցվածք. բաղկացած է **երեք** մասից, **1-ին** և **2-րդ** մասերում ներկայացվող առաջադրանքները ներառում են հարցադրումներ հայոց լեզվից, հայ գրականությունից և հայոց պատմությունից: 1-ին և 2-րդ մասերից յուրաքանչյուրի կատարման համար հատկացվում է **45**-ական րոպե:

Առաջադրանքների մի մասը **ընտրովի** պատասխաններով են, որոնք կատարելիս պետք է ընտրել առաջադրված չորս տարբերակներից մեկը:

Մյուս տիպի առաջադրանքներում պահանջվում է տալ **կարճ պատասխան** նախատեսված տեղում կամ **հիմնավորել** տրված պատասխանը: Բացատրությունները շարադրվում են ազատ ոճով:

Գրքույկի **3-րդ** մասում տրվում են հարցեր աշակերտի ընտանիքի, դպրոցի, զբաղմունքների, նախասիրությունների և այլնի մասին: